

Ժ. ԲԵԹՂԵՀԷՄ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ

Բեթղեհէմի աւանդութիւնները յիշելէ առաջ պիտի գրենք աւանդութիւնները այն տեղերուն որ կան Երուսաղէմէն Բեթղեհէմ երթալիք ճամբուն վրայ:

Անգղիական ակնաբուժարանին մօտի բարձունքին վրայ կը գտնուի Չար խորհուրդին շէնք: ԺԲ. դարու աւանդութեան մը համաձայն, Կայիափա գիւղական տուն մը ունէր այս բլուրին վրայ, ուր, կ'ըսեն թէ հրեաները կատարեցին իրենց առաջին խորհրդակցութիւնները ընդդէմ Յիսուսի: Հոն էր որ Աննայի փեսան «... զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին» (Յովն. ԺԱ. 51) Ատկէ է որ լեռը առած է Չար խորհուրդ անունը: Արաբները զայն կը կոչեն Ճեպիշ Տէյր Ապու Թօր (ցուլի հօր վանքին լեռը): Ի հընումն վանք մը կար հոն Ս. Ղուկաս անունով, որուն աւետարանական խորհրդանշանն է եզը:

Այս ճանապարհին վրայ է որ երբեմն ուխտաւորները կ'այցելէին Ս. Մարիամու բեռեկնիքին: Այս ծառը բարեպաշտական աւանդութեան մը համաձայն, որ կը յիշեցնէր Գահլրէի մօտ Մարտիրոսի ծառը, իր ստուերին տակ հովանաւորած է Ս. Կոյսը և Յիսուս մանուկը, երբ այս վերջինը Տաճար կը տարուէր Աստուծոյ ընծայուելու: 1645 ին արաբ մը կրակեց զայն, վասնզի ուխտաւորները իր արտը կը կոխտէին նուիրական ծառը համբուրելու համար:

Լատին մատենագիրներ կը յիշեն այս բեռեկնին, և կ'ըսեն թէ ծառը «կենդանի և ոգևորեալ» էր՝ իր ստուերը մեր Փրկչին տալու համար իր ճիւղերը կը տարածէր, համաձայն Սիրաքի՝ որ կ'ըսէ. «Ես իբրեւ